

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2011 թ. մայիսի 2-6-ը ՀՀ ԱՎԾ-ում է գտնվում Դանիայի վիճակագրության ծառայության բիզնեսի զարգացման բաժնի գլխավոր խորհրդատուներ Մարտին Լունդոն և Ազնես Տասսին և Լիտվայի վիճակագրական ծառայության տեղեկատվական տնտեսության բաժնի պետ Գեդիմինաս Սամուլիսը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի շրջանակում «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» ծրագրի ներքո,
- ✓ 2011 թ. մայիսի 23-27-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Շվեդիայի վիճակագրական ծառայության գլխավոր խորհրդատու Ռոլֆ Սելանդերը և Դանիայի վիճակագրական ծառայության գյուղատնտեսության վիճակագրության ենթաբաժնի պետ Քարստըն Լարսենը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի շրջանակում «Գյուղատնտեսական համատարած հաշվառում» ծրագրի ներքո,
- ✓ 2011 թ. հունիսի 6-10-ը ՀՀ ԱՎԾ-ում էին գտնվում Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի մեթոդաբանության և կազմակերպչական հարցերի բաժնի պետ Յոլանտա Մինկևիչան, Դանիայի վիճակագրության ծառայության արտաքին առևտրի և վճարային հաշվեկշռի բաժնի պետ Սորեն Սշիոնինգ Անդերսենը, բիզնես ռեգիստրի գծով գլխավոր խորհրդական Վիբեկ Սկով Մոլլերը և Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի ձեռնարկությունների ֆինանսավորման և կառուցվածքային վիճակագրության բաժնի պետի տեղակալ Էլինա Մարկայնը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի շրջանակում «Որակի կառավարում» և «Բիզնես վիճակագրություն» ծրագրերի ներքո,
- ✓ 2011 թ. հունիսի 6-10-ը ՀՀ ԱՎԾ-ում էին գտնվում Հնդկաստանի Սի-ԴիեյՍի ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների գծով փորձագետ Սպուրվ Կոյիլին 2011թ. Հայաստանի մարդահամարին օժանդակություն ցուցաբերելու նպատակով: